ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՈԹՈՄԻԶՄԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

ՇԱՎԱՐՇ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ

ՍՄԿԿ XXV համագումարում Լ. Ի. Բրեժնևը խոսելով աճող ու զարգացող սոցիալիզմի և իր դարն ապրած կապիտալիզմի միջև ընթացող գաղափարական հակամարտ պայքարի մասին, ասել է. «Երկու աշխարհայացքների պայքարում չի կարող տեղ լինել չեզոքության ու կոմպրոմիսների համար... հարկավոր է ժամանակին հակահարված հասցնել թշնամական գաղափարական դիվերսիաներին»[1]։

Հակակոմունիզմը ժամանակակից իմպերիալիստական բուրժուազիայի քաղաքականությունն ու գաղափարախոսությունն է, նրա հիմնական զենքը, որն ուղղված է մարքս-լենինյան տեսության, ՍՍՀՄ-ի և սոցիալիստական երկրների համագործակցության, բանվորական ու ազգային-ազատագրական շարժումների դեմ։ Իմպերիալիզմի հակակոմունիստական «... քաղաքական և գաղափարախոսական զինանոցում հարաճուն նշանակություն է ձեռք բերում կղերականությունը... Ստեղծելով իր արհմիութենական, երիտասարդական, կանանց և այլ կազմակերպությունները, կղերամտությունը պառակտում է բանվոր դասակարգի շարքերը, աշխատավորների շարքերը»[2]։

Մարքս-լենինյան տեսության և կոմունիստական գաղափարախոսության դեմ բուրժուազիայի պայքարում կաթոլիկ եկեղեցին և նրա կենտրոն Վատիկանը կարևոր դեր են խաղում։ Նրանք ունեն իրենց քաղաքական կուսակցությունները, տասնյակ միլիոն տպաքանակով հրատարակվող թերթեր, ամսագրեր, բազմաթիվ «գիտական» և ուսումնական հաստատություններ, համալսարաններ և նույնիսկ «գիտությունների ակադեմիաներ»։ Վատիկանն ունի իր պաշտոնական փիլիսոփայությունը, որը նեոթոմիզմ կամ նեոսխոլաստիկա է կոչվում։ Այս ուղղության ներկայացուցիչները զանազան «նոր» ձևերով պրոպագանդում են միջնադարյան սխոլաստիկայի խոշորագույն ներկայացուցիչ Թոմա Աքվինացու ուսմունքը։ Նեոթոմիստներն իրենց փիլիսոփայությունն անվանում են «համամարդկային», «դեմոկրատական» և «անկուսակցական», իսկ իրենց նեոռեալիստներ կամ ռենազատական ռեալիստներ են համարում։

Ժամանակակից Վատիկանը հասկանում է, որ գիտության և տեխնիկայի զարգացման դարաշրջանում նրա փիլիսոփայությունը պետք է ստեղծի այնպիսի իմացության տեսություն, որը, թեկուզև աղճատված ձևով, ընդգրկի գիտական իմացության որոշ տարրեր։ Նեոթոմիստական իմացության «նոր» տեսությունը ձևակերպվեց Հռոմի Պիոս XII պապի, այսպես կոչված, «պապական գիտությունների ակադեմիայում» ունեցած ելույթից հետո, ուր նա

---

1 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 111։

2 «ՍՄԿԿ ծրագիրը և կանոնագրությունը», Երևան, 1964, էջ 65։

ասաց. «Չի կարելի ասել, որ բնությունն ինքնըստինքյան անճանաչելի է... Այ, բնությունն իրականություն է, ըստ որում ճանաչելի իրականություն... Իրերի շարժումը նրա նկատմամբ մեր մեջ պատկերներ է առաջացնում»[3]։ Նեոթոմիստ Մարիտենը պապի այս ելույթից ոգևորված բացականչել է, թե բանականությունն այժմ պետք է պայքարի իռացիոնալիզմի դեմ, իսկ նրա կոլեգա՝ աստվածաբան Ժիլսոնը հայտարարեց, որ աշխարհում անճանաչելի իրեր գոյություն չունեն։

Հայտնի է, որ մարքսիզմ-լենինիզմի դասականները փիլիսոփայության հիմնական հարցի երկրորդ կողմը համարում են աշխարհի ճանաչելիության խնդիրը։ Որպես օրինաչափություն, բոլոր դարաշրջանների մատերիալիստներն ընդունել և ընդունում են ոչ միայն աշխարհի ունայ գոյությունը, այլև նրանում գոյություն ունեցող իրերի, առարկաների ու երևույթների ճանաչման հնարավորությունը մարդու կողմից։ Դրան հակառակ, իդեալիստներն այս կամ այն կերպ ժխտել են մարդու կողմից աշխարհի ճանաչման հնարավորությունը։ Վ. Ի. Լենինը «Փիլիսոփայական տետրերում» քննադատելով փիլիսոփայական իդեալիզմը, համառոտակի շարադրել է իմացության ընթացքի մասին մարքս-լենինյան ուսմունքը։ Նա գտնում է, որ մարդկային իմացությունը կենդանի հայեցությունից անցնում է դեպի աբստրակտ մտածություն և այնտեղից էլ դեպի պրակտիկա։ Այսպիսին է օբյեկտիվ ռեալության իմացության դիալեկտիկական ուղին։

Ժամանակակից նեոթոմիզմն իր իմացության տեսությունը մկրտում է «գնեսեոլոգիա», «քննադատական էպիստեմիոլոգիա», «տրամաբանական էպիստեմիոլոգիա» և այլ անուններով։ Սակայն խնդիրը ոչ թե անվանման, այլ նրա բովանդակության էության մեջ է, որովհետև նեոթոմիստական գնեսեոլոգիան, ելնելով քրիստոնեական կրոնի դրույթներից, թերագնահատում է իսկական դիտական իմացության դերն ու նշանակությունը։ Նեոթոմիզմը գտնում է, որ մարդը գիտության միջոցով չի կարող ճանաչել աստված, սուրբ հոգի, դրախտ, դժոխք, մեռելների հարություն, ահեղ դատաստան և այլ հասկացություններ։ Գիտությունը և գիտական իմացությունը չեն կարող հաստատել հրեշտակների, դևերի և սատանաների գոյությունը։ Հետևաբար, ժամանակակից գիտությունը թույլ է, անզոր և առանց կրոնի օգնության այն ոչ մի արժեք չունի։ Նեոթոմիստ Մարիտենն այդ կապակցությամբ գրել է. «Առանց Հովհաննես Մկրտչի մաքսիմումի, աշխարհում չի լինի ո՛չ իմացություն, ո՛չ գիտություն, ո՛չ հանգիստ, ո՛չ ուրախություն, ո՛չ աղնվություն, ո՛չ անվտանգություն, ո՛չ ազատություն, ո՛չ փառք և ոչ էլ բարություն»[4]։

Հայտնի է, որ յուրաքանչյուր իմացության տեսություն սերտորեն կապված է տվյալ փիլիսոփայության հիմնական, աշխարհայացքային հարցի հետ՝ հանդիսանալով նրա երկրորդ կողմը։ Այս հիմնական դրույթից ելնելով, Վ. Ի. Լենինը գրել է. «Աշխարհը մատերիայի օրինաչափ շարժումն է, և մեր իմացությունը՝ բնության բարձրագույն արգասիքը լինելով, ի վիճակի

---

3 «Современные религиозно-философские течения в странах капитала». М. 1962, с. 337.

4 Maritain, Destingur pur Inur..., Paris, 1946, p. 122.

է միայն արտացոլել այդ օրինաչափությունը»[5]։ Մարքս-լենինյան փիլիսոփայությունը հիմք ընդունելով լենինյան արտացոլման տեսությունը, ստեղծել է իմացության և աշխարհի ճանաչման մասին իր կուռ մատերիալիստական ուսմունքը։

Նեոթոմիզմի ներկայացուցիչներն ու տեսաբաններն աշխատում են իրենց իմացության տեսության բոլոր հարցերը բխեցնել կրոնական-քրիստոնեական գաղափարախոսությունից։ Ի՞նչ է իմացությունը հարցին նրանք պատասխանում են, որ այն աստծու կողմից մարդուն տրված մենաշնորհ է, որովհետև կենդանիները զրկված են դրանից։ Այդ մենաշնորհով աստված ի սկզբանե՝ նախահայր Ադամին և նախամայր Եվային հաղորդած պատվիրանով, նեղ և սահմանափակ իմացության հնարավորություն է տվել մարդուն։

Մերժելով պոզիտիվիզմն ու նեոպոզիտիվիզմը, համարելով դրանք «դոեհիկ էմպիրիա», նեոթոմիստները չեն խորշում պոզիտիվիզմից վերցնել նրա իմացության տեսության սխեման և յուրովի օգտագործել այն։ Հայտնի է, որ պոզիտիվիզմի հիմնադիր Կոնտը գտնում էր, որ մարդկային իմացությունը երեք փուլ ունի։ Առաջինը՝ կրոնական-աստվածաբանականն է, որը մարդկային իմացության ստորին աստիճանն է, միջինը՝ տրամաբանական-գիտականը, իսկ երրորդը՝ ամենաբարձրը՝ պոզիտիվիստականը։ Նեոթոմիստները վերցնելով պոզիտիվիզմի իմացության տեսության այս սխեման, այն օգտագործել են հակառակ ուղղությամբ։ Նրանց իմացության տեսության մեջ գիտականը ստորինն է, տրամաբանական-փիլիսոփայականը՝ միջինը, և վերջապես, իմացության ամենաբարձր աստիճանը՝ կրոնական աստվածհայտնությունները։

Իսկ ի՞նչ դեր են կատարում մարդկային իմացության պրոցեսում նրա զգայությունները։ Նեոթոմիստների հոգևոր հայր Թոմա Աքվինացին զգայական իմացության դերի մասին հետևյալն է ասել. «Մեր բնական իմացությունն առաջանում է զգայություններից», կամ «Մեր բնական իմացությունը սկիզբ է առնում զգայություններից»[6]։

Զգայություններով օժտված են նաև կենդանիները։ Արդյոք տարբերություն կա մարդկային և կենդանական զգայական իմացության միջև։ Թոմա Աքվինացին այդ հարցին պատասխանում է այսպես. «Ձևերի ընկալման հարցում մարդու և մյուս կենդանի արարածների միջև ոչ մի տարբերություն գոյություն չունի։ Ե՛վ այստեղ, և այնտեղ ընկալման ենթակա օբյեկտի կողմից փոփոխություններ են կատարվում»[7]։ Նույնացնելով մարդկանց ու կենդանիների զգայությունները և նրանց կողմից ընկալվող առարկաների ու երևույթների ձևերը, Թոմա Աքվինացին նսեմացնում, սահմանափակում էր մարդկային զգայական իմացության դերը, այն հավասարեցնում կենդանիների զգայություններին։ Նա գտնում էր, որ զգայությունները մարդուն տալիս են արտաքին աշխարհի իրերի և առարկաների զգայական պատկերները միայն, որոնք պատահական բնույթ ունեն։ Իսկ բնության երևույթների և աշխարհում

---

5 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 18, էջ 213։

6 Thoma Aquinatis, Summa Theologica, 1864, Paris, P. 1, q. 84, a. 4.

7 Նույն տեղում, q. 78, a, 4.

գոյություն ունեցող իրերի ու առարկաների իմացությունը, նրանց ճանաչումը յուրահատուկ է միայն աստծուն։

Ելնելով Թոմա Աքվինացու այս դրույթից, նեոթոմիզմը շարադրում է իր տեսակետը զգայական իմացության մասին։ Նա գտնում է, որ իրերի և առարկաների զգայական ձևերը գոյություն ունեն մարդկային իմացությունից առաջ, և մարդն օգտվելով այդ նախնական զգայական ձևերից, իրերին և առարկաներին անուններ է տալիս։ Հետևաբար, նա ճանաչում է աշխարհի իրերի ու առարկաների արտաքին, պատահական ձևերը միայն, բայց ոչ դրանց բովանդակությունը, որովհետև այդ ամենը դուրս են մնում մարդկային իմացության սահմաններից։ Այսպիսին է նեոթոմիստական սենսուալիզմը։

Իր հանճարեղ «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ գոյություն ունեն սենսուալիզմի տարբեր ձևեր, որ և՛ մատերիալիստ Դիդրոն, և՛ սուբյեկտիվ իդեալիստ Բերկլին սերվում են անգլիական մատերիալիստ Ջոն Լոկի սենսուալիզմից։ Ժամանակակից նեոթոմիզմը զգայական իմացության գնահատության հարցում սերվում է սուբյեկտիվ իդեալիստ Բերկլիի ուսմունքից և պաշտպանում է հակագիտական այն տեսակետը, որ մարդկային զգայությունները ռեալ իրականություն չեն արտացոլում։

Իմացության տեսության բնագավառում զգայականի դերի մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Իմացության տեսության առաջին նախադրյալը, անտարակույս, այն է, որ մեր գիտելիքների միակ աղբյուրը զգայություններն են... Զգայություններից ելնելով՝ կարելի է գնալ սուբյեկտիվիզմի գծով, որը հասցնում է սոֆիստիզմի («մարմիններն զգայությունների կոմպլեքսներ կամ կոմբինացիաներ են»), և կարելի է գնալ օբյեկտիվիզմի գծով, որը հասցնում է մատերիալիզմի (զգայությունները մարմինների, արտաքին աշխարհի պատկերներն են)»[8]։ Իսկ իդեալիստական փիլիսոփայության կողմից զգայական իմացության դերին ու նշանակությանը տրվող գնահատականի մասին խոսելիս, Վ. Ի. Լենինը մատնանշել է. «Իդեալիստական փիլիսոփայության սոփեստությունն այն է, որ զգայությունը համարվում է ոչ թե գիտակցության կապ արտաքին աշխարհի հետ, այլ միջնորմ, պատ, որը բաժանում է գիտակցությունն արտաքին աշխարհից...»[9]։ Հենց այսպիսին է նեոթոմիստների տեսակետը զգայական իմացության դերի մասին։ Նրանց կարծիքով, թեպետ առարկաների, իրերի և երևույթների զգայական պատկերները դրանցից առաջ և կանխապես աստծու կողմից տրված են մարդուն, սակայն այդ զգայություններն աշխարհի մասին ռեալ պատկերացում տալ չեն կարող և դրանց միջոցով մարդը կարող է միայն պատահական պատկերներ ընկալել։

Սրանով էլ սահմանափակվում է զգայական իմացության դերը նեոթոմիստական գնոսեոլոգիայում։

Մարդկային իմացությունը պրոցես է, այն անվերջ մոտեցում է աշխարհի իրերին, առարկաներին, երևույթներին և հասարակական հարաբերություններին։ Իմացությունը ձգտում է հասնել գրանցում գոյություն ունեցող շարժման, փոփոխման և զարգացման օրինաչափությունների հայտնագործմանն ու ճանաչմանը։ Սկսվելով զգայականից, մարդկային իմացությունը չի

---

8 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 18, էջ 154։

9 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 18, էջ 53։

սահմանափակվում միայն նրա ուած տվյալներով, նա առնում է առաջ դեպի միջնորդավորված և ընդհանրացված աբստրակտ մտածություն, որն ամփոփելով զգայականից ստացված տվյալները, ստեղծում է հասկացություններ, որոնք տրամաբանորեն արտացոլվում են իրերի, առարկաների և երևույթների միջև գոյություն ունեցող ընդհանուրը հասկացությունների ձևով։ Մարդկային իմացությունը հասկացությունների միջև գոյություն ունեցող կապերի միջոցով ստեղծում է դատողություններ, իսկ վերջիններս՝ կապի և կապակցության օգնությամբ, մտահանգումներ։ Բարձր աբստրակտ հասկացությունները, որոնք արտացոլում են բնության կամ հասարակության ընդհանուր բնույթի օրինաչափությունները, կոչվում են փիլիսոփայական կամ տրամաբանական կատեգորիաներ։ Այսպիսին են աբստրակտ մտածության դերն ու նշանակությունը իմացության տեսության մեջ։ Այս մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Մտածողությունը, վերընթանալով կոնկրետից դեպի աբստրակտը, չի հեռանում—եթե այն ճիշտ է...—ճշմարտությունից. այլ մոտենում է դրան։ Մատերիայի, բնության օրենքի, աբստրակցիան, արժեքի աբստրակցիան և այլն, մի խոսքով՝ բոլոր գիտական (ճիշտ, լուրջ, ոչ-անհեթեթ) աբստրակցիաները բնությունն ավելի խորն են արտացոլում, ավելի ճիշտ, ավելի լրիվ»[10]։

Նեոթոմիստների նախահայր Թոմա Աքվինացին աբստրակտ մտածությունը աստծու կողմից մարդուն տրված հոգու կամ ինտելեկտի շնորհ էր համարում։ Նա գտնում էր, որ աբստրակտ մտածության ձևերը մարդկային ինտելեկտի երևակայության արդյունք են։ Այդ պատճառով էլ «հոգու իմացական հնարավորությունը համարելով ինտելեկտը», նա աբստրակցիաները մարմնական օրգանների հետ կապված գործողություն չի համարում։ Ուրեմն, ըստ Թոմա Աքվինացու, իմացության աբստրակտ ձևը մարդկային հոգու կամ ինտելեկտի զուտ վերացական բնույթի հատկությունն է։ Եվ քանի որ մարդը որպես ստորադաս արարած աստծու ստեղծածն է, ուստի նրա հետ չի կարող համեմատվել։ Հետևաբար, նրան հատուկ չէ նաև աբստրակտ մտածությունը։ Նա հենց այդպես էլ գրել է. «Իմացությունն ամենից առաջ աստծու բնորոշիչ հատկությունն է, և անվայել՝ ամեն տեսակի ստորադաս արարածի համար»[11]։

Նեոթոմիզմը նույնպես մետաֆիզիկորեն պատնեշ է ստեղծում զգայական և ռացիոնալ իմացության միջև։ Նա գտնում է, որ ռացիոնալ իմացությունը կարող է միայն այս կամ այն հիպոթեզները ստեղծել, բայց նա անզոր է ճանաչելու աշխարհի իրերը, առարկաները, երևույթները և մարդկային հասարակական հարաբերությունները։ Ինչ խոսք, որ սա մեծ տուրք է այն ագնոստիցիզմին, որի դեմ, ըստ նեոթոմիզմի ներկայացուցիչներ Մարիտենի ու Ժիլսոնի հայտարարության, պետք է իրենք պայքարեն։ Սակայն նրանք ոչ թե անփութության կամ զանցառության հետևանքով են ագնոստիցիզմին տուրք տալիս, այլ գիտակցաբար, որպեսզի ցույց տան գիտության ու գիտական իմացության անզորությունը և կրոնական դոգմաների հզորությունն ու կատարյալությունը։

Նեոթոմիզմի տեսաբան, արևմտագերմանացի արքեպիսկոպոս Շպյուլբեկը, խոսելով գիտության և գիտական իմացության նվաճումների մասին,

---

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 204—205։

11 Thoma Aquinatis, Summa Contra Gentilles, L. II, „Brusselix", 1881, c. 85.

որոնք սպառնում են կրոնական հավատալիքների գոյությանը, իրեն և իր կոլեգաներին մխիթարում է նրանով, որ իբր գիտության և գիտական իմացության նվաճումները դեռևս բավական չեն, որպեսզի լիովին հաղթահարեն կրոնի գոյությունը։

Հայտնի է, որ մարդկային իմացության ճշտության, նրա կատարած եզրակացությունների հավաստիության հարցը կարևոր տեղ է գրավում իմացության տեսության մեջ։ Մարքսիզմ-լենինիզմը գտնում է, որ մարդկային իմացությունը կյանքից կտրված, ինչ-որ զուտ տրամաբանական բնույթ կրող վերացական հարց չէ։ Կ. Մարքսն իր «Ֆոյերբախի մասին» թեզիսներում գրել է. «Մի՞ն հարցը, թե մարդկային մտածությունն առարկայական ճշտություն ունի՞, ամենևին էլ տեսական հարց չէ, այլ՝ գործնական հարց է։ Մարդը պրակտիկայում պետք է ապացուցի իր մտածության բազմակողմանիությունը, այսինքն նրա իրականությունը և ուժը»[12]։

Իսկ ինչպե՞ս է լուծում իմացության համար այդ անչափ կարևոր նշանակություն ունեցող հարցը նեոթոմիզմը։

Նեոթոմիզմի նախահայր Թոմա Աքվինացին ամեն կարգի իմացության հիմնական խնդիրը աստծու ճանաչումն էր համարում, իսկ ամեն տեսակի իմացության ճշտության չափանիշը՝ այն, թե ինչ չափով է այդ ճանաչումը համընկնում կրոնական հավատալիքներին ու դոգմաներին։ Չնայած Թոմա Աքվինացու դարաշրջանը վաղուց անցել է, սակայն նրա հետևորդ նեոթոմիստները նույնպես իմացության ամենաբարձր աստիճանը աստվածաճանաչումն են համարում, և նրանց կարծիքով մարդու կողմից ստեղծված բոլոր հիպոթեզները կարող են ստուգվել միայն աստվածային ճշմարտության միջոցով։ Այսինքն՝ մարդկային իմացության ճշտությունը պետք է ստուգվի նրանով, թե նրա եզրակացությունները արդյոք համընկնո՞ւմ են կրոնական դոգմաներին, թե՞ ոչ։

Ինչպես տեսնում ենք, իմացության իրենց տեսությամբ էլ «սուրբ» Թոմայից առաջ չեն անցել նրա հետևորդները։ Սակայն ընդունելով Աքվինացու մեծ հեղինակությունն այս հարցում, նրանք որոշ «նորամուծություն» են կատարում։ Նեոթոմիստները գտնում են, որ հասարակ և առօրյա ճշմարտությունների չափանիշը կարող է լինել աստծու կողմից մարդուն տված բանականությունը, բայց ճշմարտության «բարձրագույն» ձևեր հանդիսացող կրոնական դոգմաների հավաստիությունը մարդկային թույլ և անզոր բանականությունը չի կարող ո՛չ հաստատել, ո՛չ էլ հաստատել։ Այդպիսի ճշմարտություններ են, օրինակ, աստծու, Քրիստոսի, հրեշտակների, դևերի, սատանաների, Հիսուսի հարության, երկինք համբառնալու, դրախտի, դժոխքի, մեռելների հարության, ահեղ դատաստանի ու այլ կարգի կրոնական դոգմաներ, որոնք ոչ մի գիտական տեսությամբ չի կարելի հաստատել։ Իսկ դրանք, ինչպես գիտենք, կրոնական դոգմաներում գլխավորն ու հիմնականն են։

Նեոթոմիստներ Մարիտենը, Ժիլսոնը, Ֆրայբուրգի կաթոլիկական համալսարանի ռեկտոր Բոխենսկին, նեոթոմիստական «տնտեսաբան», սովետական գաղափարախոսության «մասնագետ», «գենադատ» Գուստավ Վետտերը և ուրիշներ, մշակելով նեոթոմիզմի իմացության տեսությունը, առաջարկում են ճշմարտության հասնելու չորս ձև։ Առաջինը՝ առօրյա մարդկային իմա-

[12] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, с. 1.

ցության փորձնական փուլն է, որին մարդը հասնում է աստծու կողմից իրեն տրված բանականության շնորհիվ։ Սա ճշմարտության հասնելու ամենացածր ֆիզիկական կամ բարբառոսական ձևն է։ Երկրորդը գիտական կամ մաթեմատիկական ձևն է, որը կատարվում է զգայականից ստացված տվյալների ամփոփման միջոցով։ Երրորդը փիլիսոփայական կամ, նեոթոմիստական տերմինով ասած, մետաֆիզիկական ձևն է։ Չորրորդը՝ ամենաբարձր աստիճանը, կրոնական-աստվածայինն է։ Իմացության տեսության նեոթոմիստական այս ուսմունքի հեղինակները ոչ մի նոր բան չեն ավելացնում Թոմա Աքվինացու իմացության տեսությանը։ Վերջինս լինելով միջնադարյան սխոլաստիկ արիստոտելական և օգտվելով Արիստոտելի իմացության տեսությունից, նրանից վերցրել է իմացության տեխնե, էմպիրիա, էպիստեմիա, սոֆիա փուլերը և դրանք օգտագործել իր իմացության տեսությունը կառուցելիս՝ միայն այն տարբերությամբ, որ Ստագիրացու սոֆիա (իմաստություն) տերմինը նա փոխարինել է կրոնական-աստվածաբանական իմաստությամբ։

Իմացության տեսության այս տեսանկյունից մոտենալով, Մարիտենը գտնում է, որ ամենևին էլ անհրաժեշտ չէ, որպեսզի մարդն իմացության պրոցեսում օգտվի իր զգայարանների՝ տեսողության, լսողության, հոտառության, շոշափելիքի և ճաշակելիքի տվյալներից։ Նա գրում է, որ մարդկային իմացությունը պետք է լինի «տեսողականից և զգայականից բացարձակապես զտված միտք»[13]։

Որպես Վատիկանի պաշտոնական փիլիսոփաներ, եկեղեցու ղեկավարների հետ միասին, նեոթոմիստները գտնում են, որ այժմ աշխարհում (խոսքը, իհարկե, կապիտալիստական աշխարհի մասին է) ոչ միայն տնտեսական ու քաղաքական, այլև հոգևոր ճգնաժամ է տիրում։ Դա, անշուշտ, այն ճգնաժամն է, որ աթեիզմի զանգվածային ծավալման հետևանքով ապրում է նաև կրոնական-քրիստոնեական գաղափարախոսությունը։ Այդ վիճակը 1960 թ. նշեց նաև Հռոմի պապ Հովհան XXIII-ը իր «Veritas» հատուկ էնցիկլիկով (կոնդակով)։

Կոնդակի հրապարակումից չորս տարի անց Լուվենա (Բելգիա) քաղաքի կաթոլիկական համալսարանը, Պողոս VI պապի նախաձեռնությամբ, ճշմարտության հարցին նվիրված հատուկ կոնգրես հրավիրեց։ Եվ կաթոլիկական այդ ժողովը եկավ այն եզրակացության, որ կաթոլիկ եկեղեցին, նրա սպասավորներն ու նեոթոմիստ փիլիսոփաները պետք է ավելի եռանդուն պրոպագանդեն քրիստոնեական աստվածային ճշմարտությունները հավատացյալների և աթեիստների շրջանում, որպեսզի բավարարեն «մարդկային հոգևոր և բարոյական» պահանջմունքները։ Նման որոշումն, ինչ խոսք, կաթոլիկ եկեղեցու ղեկավարության և նրա նեոթոմիստ փիլիսոփաների հերթական դիվանագիտական քայլն էր։ Կասկած չկա, որ կապիտալի աշխարհի աշխատավորների համար ներկայումս կարևորը նյութական կյանքի պայմանների բարելավումն է և առաջին հերթին տասնյակ միլիոնների հասնող գործազուրկների բանակի ժողովրդական զանգվածների աղքատության, ռասսայական խտրությունների վերացումը և այլն։ Սակայն այս ամենը դուրս են մնում կաթոլիկ եկեղեցու և նրա նեոթոմիստ փիլիսոփաների տեսադաշտից։ Մի՞թե

[13] Maritain, նշվ. աշխ., էջ 122։

նրանք կարող են աստվածային բնույթից զուրկ նման «հասարակ» և «ուշադրության անարժան» հարցերով զբաղվել։

Համառոտակի այսպիսին է կաթոլիկ եկեղեցու կենտրոն՝ Վատիկանի պաշտոնական փիլիսոփայության՝ նեոթոմիզմի իմացության տեսությունը։ Իրենց իմացության տեսությամբ ժամանակակից նեոթոմիստները հանդես են գալիս կրոնական հակակոմունիզմի գործուն ուժերից մեկի դերում և իմպերիալիստական բուրժուազիայի մյուս դաղափարախոսների հետ միասին աշխատում են հենարան լինել կապիտալիզմի խարխլվող շենքի պահպանման համար։

КРИТИКА ТЕОРИИ ПОЗНАНИЯ СОВРЕМЕННОГО НЕОТОМИЗМА

ШАВАРШ АЗНАУРЯН

Резюме

В области теории познания современный неотомизм защищает основные положения средневекового католического теолога Фомы Аквинского. В своей теории познания неотомизм третирует как чувственное познание, так и научные абстракции и не признает практику в качестве критерия познания, считая основной задачей всякого познания— познание бога и божественных истин. В вопросах теории познания неотомизм выступает как злейший враг марксистско-ленинской научной теории познания, как представитель религиозного антикоммунизма.